ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան **15/08/2022**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին՝ Վլադիմիր Առաքելյանը, Նաիրի Հակոբյանը, Էմիլ Հարությունյանը, Նազիկ Հարությունյանը, Նաիրա Մելիքյանը, Նորայր Միքայելյանը, Գևորգ Պողոսյանը, Գուրգեն Օսիպյանը, Տիգրան Գեղամյանը, Մելինե Գասպարյանը, Մարգարիտա Հարությունյանը, Պավել Ցուգունյանը, Գոռ Գալստյանը (ովքեր իրենց բացակայության պատճառների մասին չեն տեղեկացրել):

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Եղիշե Ավետիսյանը, Անուշ Ծատուրյանը

Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Էդուարդ Բաբայանը

Նիստը արձանագրում էր Աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար՝ Արուսյակ Առաքելյանը

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՈՒԹԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 65-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի օգոստոսի 15-ի արտահերթ ութերորդ նիստի հետևյալ օրակարգը.

1) Աբովյան քաղաքի Շուշի թաղամասի փողոցներն անվանակոչելու մասին.

2) Աբովյան քաղաքի Հադրութ թաղամասի փողոցներն անվանակոչելու մասին.

3) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող 1.41180 հեկտար հողամասն առանց մրցույթի վարձակալությամբ տրամադրելու մասին.
4) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող 0.87793 հեկտար հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և առանց մրցույթի վարձակալությամբ տրամադրելու մասին.
5) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջանի թիվ 71/8 հասցեում գտնվող հողամասը Սասուն Գրիգորյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
6) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի 2-րդ արդյունաբերական թաղամասի թիվ 3/8 հասցեում գտնվող հողամասն Արթուր Պատվականի Սիմոնյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
7) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Ռոսիայի փողոցի թիվ 15 հասցեում գտնվող հողամասը Գրիգոր Պողոսյանին և Արուսյակ Առաքելյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
8) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող 8-րդ միկրոշրջանի 4-րդ թաղամասի թիվ 15/1 հասցեում գտնվող հողամասն Արմինե Ասրյանին և Կարեն Ղուկասյանին ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով օտարելու մասին.
9) Աբել Մելիքսեթյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակելուն համաձայնություն տալու մասին.
10) Քրիստինա Աղաջանյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակելուն համաձայնություն տալու մասին.
11) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին.
12) Աբովյան համայնքի կարիքների համար հայտարարված գնման ընթացակարգի չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամ Ա. Քոսակյանն առաջարկեց «Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջանի թիվ 71/8 հասցեում գտնվող հողամասը Սասուն Գրիգորյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին» որոշման նախագիծը հանել օրակարգից, քանի որ առաջացել էր լրացուցիչ ուսումնասիրության կարիք:

Նախագծի 1-ին կետի 5-րդ ենթակետում ներառված «Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջանի թիվ 71/8 հասցեում գտնվող հողամասը Սասուն Գրիգորյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին» որոշման նախագիծը հանվեց օրակարգից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97-Ա/

Դահլիճ մտան ավագանու անդամներ Պավել Ցուգունյանը, Տիգրան Գեղամյանը, Մելինե Գասպարյանը, Մարգարիտա Հարությունյանը և Գոռ Գալստյանը:

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՇՈՒՇԻ ԹԱՂԱՄԱՍԻ ՓՈՂՈՑՆԵՐՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, «Աշխարհագրական անվանումների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 3-րդ բաժինների պահանջների, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 06-ի N 37-Ա որոշման, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Աբովյան քաղաքի Շուշի թաղամասի փողոցներն անվանակոչել՝ համաձայն հատակագծի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հարցը ներկայացնելու ընթացքում ավագանու անդամ Տ.Գեղամյանը ընթերցեց հայտարարություն, որից հետո առաջարկեց օրակարգից հանել 1-ին կետի 5-րդ և 7-րդ հարցերը, հակառակ դեպքում «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցությունը իմաստ չի գտնում մասնակցելու ավագանու նիստին:
Պատասխանվեց, որ օրակարգի նախագծի 1-ին կետի 5-րդ հարցը հանվել է օրակարգից և օրակարգն արդեն հաստատվել է, իսկ 7-րդ հարցը կքննարկվի ներկայացնելու ժամանակ:
«Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցության ավագանու անդամներ Պ.Ցուգունյանը, Տ.Գեղամյանը, Մ.Գասպարյանը, Մ.Հարությունյանը, և «Հանրապետություն» խմբակցության անդամ Գ. Գալստյանը լքեցին նիստերի դահլիճը:

Ե. Ավետիսյանն առաջարկեց օրակարգի 1-ին կետի 1-ին և 2-րդ հարցերը միասին դնել քվեարկության:

Որոշման նախագծերի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱԴՐՈՒԹ ԹԱՂԱՄԱՍԻ ՓՈՂՈՑՆԵՐՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, «Աշխարհագրական անվանումների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005

թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 3-րդ բաժինների պահանջների, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 06-ի N 38-Ա որոշման, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Աբովյան քաղաքի Հադրութ թաղամասի փողոցներն անվանակոչել՝ համաձայն հատակագծի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1.41180 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ը» ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2021 թվականի փետրվարի 19-ի N Լ-637 լեռնահատկացման ակտը և օգտակար հանածոների արդյունահանման և /կամ/ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման N ՇԱԹ-29/637 թույլտվությունը, հաշվի առնելով «ԷՅ ԷՄ ԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Հայկ Մուրադյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի հունիսի 22-ի N S-742), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Թույլատրել համայնքի ղեկավարին առանց մրցույթի՝ վարձակալությամբ «ԷՅ ԷՄ ԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ընդերքօգտագործման նպատակով տրամադրել Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի օգոստոսի 1-ի N 01082022-07-0146 վկայական) Արամուս գյուղի Տիգրանաձորի խճուղու 3-րդ նրբանցքի 128/1 հասցեում գտնվող 07-013-0157-0128 կադաստրային ծածկագրով 2,17654 հեկտար հողամասից 1,41180 հեկտար հողամասը:
2. Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 3 (երեք) տարի 4 (չորս) ամիս՝ տարեկան 611 486 (վեց հարյուր տասնմեկ հազար չորս հարյուր ութսունվեց) դրամ վարձավճարով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Առաջարկվեց օրակարգի 1-ին կետի 3-րդ և 4-րդ հարցերը միասին դնել քվեարկության:

Որոշման նախագծերի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.87793 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 29-րդ կետերի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ և 64-րդ կետերի, 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ը» ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 13-ի N 1/փ-138 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2021 թվականի դեկտեմբերի 17-ի N Լ-666 լեռնահատկացման ակտը և օգտակար հանածոների արդյունահանման և /կամ/ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման N ՇԱԹ-29/666 թույլտվությունը, հաշվի առնելով «ԱՐՔԱՐԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Դավիթ Ազատյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի ապրիլի 12-ի N S-428), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 07-013-0252-0030 կադաստրային ծածկագրով 0.89355 հեկտար մակերեսով հողամասից (հիմք՝ 2021 թվականի փետրվարի 23-ի N 23022021-07-0074 վկայական) 0.87793 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝ ընդերքի օգտագործման գործառնական նշանակության հողամասի:
2. Թույլատրել համայնքի ղեկավարին առանց մրցույթի՝ վարձակալությամբ «ԱՐՔԱՐԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ընդերքօգտագործման նպատակով տրամադրել սույն որոշման 1-ին կետում նշված 07-013-0252-0030 կադաստրային ծածկագրով 0.89355 հեկտար հողամասից 0.87793 հեկտար հողամասը (համաձայն հատակագծի):
3. Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 20 (քսան) տարի՝ տարեկան 380 254 (երեք հարյուր ութսուն հազար երկու հարյուր հիսունչորս) դրամ վարձավճարով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 2-ՐԴ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 3/8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ

ՀՈՂԱՄԱՍՆ ԱՐԹՈՒՐ ՊԱՏՎԱԿԱՆԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի, 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 25-Ն և 26-Ն որոշումների և հիմք ընդունելով Արթուր Սիմոնյանի լիազորած անձ Կարեն Յայլոյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի մայիսի 31-ի N Ք-2437), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Արթուր Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի մայիսի 25-ի N 25052022-07-0185 վկայական) Աբովյան քաղաքի 2-րդ արդյունաբերական թաղամասի 3/2 հասցեում գտնվող շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության 0.104775 հեկտար մակերեսով հողամասին կից Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի մայիսի 31-ի N 31052022-07-0017 վկայական) Աբովյան քաղաքի 2-րդ արդյունաբերական թաղամասի 3/8 հասցեում գտնվող 07-002-0103-0214 կադաստրային ծածկագրով 0.0523 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել սահմանակից ընդլայնվող 07-002-0103-0139 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատեր Արթուր Պատվականի Սիմոնյանին:

2. Արթուր Սիմոնյանը պարտավոր է՝

1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին մուծել 2 323 062 (երկու միլիոն երեք հարյուր քսաներեք հազար վաթսուներկու) դրամ՝ ընդլայնվող հողամասի կադաստրային արժեքը.

2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Արթուր Սիմոնյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՌՈՍԻԱՅԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՐԻԳՈՐ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի, 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 25-Ն և 26-Ն որոշումների և հիմք ընդունելով Գրիգոր Պողոսյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի օգոստոսի 09-ի N Ք-3920), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է***.

1. Գրիգոր Ավետիսի Պողոսյանին և Արուսյակ Հուսիկի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի հուլիսի 04-ի N 04072022-07-0081 վկայական) Աբովյան քաղաքի Ռոսիայի փողոցի թիվ 14/4/1 հասցեում գտնվող 07-002-0067-0009 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 130.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին կից Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի օգոստոսի 09-ի N 09082022-07-0121 վկայական) Աբովյան քաղաքի Ռոսիայի փողոցի թիվ 15 հասցեում գտնվող 07-002-0067-0023 կադաստրային ծածկագրով 35.5 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը, կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել սահմանակից ընդլայնվող 07-002-0067-0009 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատերեր Գրիգոր Ավետիսի Պողոսյանին և Արուսյակ Հուսիկի Առաքելյանին:

2. Սույն որոշման առաջին կետում նշված անձինք պարտավոր են՝

1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 574 270 (հինգ հարյուր յոթանասունչորս հազար երկու հարյուր յոթանասուն) դրամ՝ ընդլայնվող հողամասի կադաստրային արժեքը.

2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում են Գրիգոր Պողոսյանի և Արուսյակ Առաքելյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 8-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ 4-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 15/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՄԻՆԵ ԱՍՐՅԱՆԻՆ ԵՎ ԿԱՐԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի, 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 25-Ն և 26-Ն որոշումների և հիմք ընդունելով Կարեն Ղուկասյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի հուլիսի 22-ի N Ք-3533), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Արմինե Համլետի Ասրյանին և Կարեն Սրաբիկի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2021 թվականի նոյեմբերի 04-ի N 04112021-07-0137 վկայական) Աբովյան քաղաքի 8-րդ միկրոշրջանի 4-րդ թաղամասի 15 հասցեում գտնվող բնակելի տան և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 512.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին կից Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի հուլիսի 13-ի N 13072022-07-0095 վկայական) Աբովյան քաղաքի 8-րդ միկրոշրջանի 4-րդ թաղամասի 15/1 հասցեում գտնվող 75.0 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել սահմանակից ընդլայնվող 07-002-0017-0019 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատերեր Արմինե Ասրյանին և Կարեն Ղուկասյանին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված անձինք պարտավոր են՝
1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին մուծել 512 550 (հինգ հարյուր տասներկու հազար հինգ հարյուր հիսուն) դրամ՝ ընդլայնվող հողամասի կադաստրային արժեքը.
2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում են սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 104-Ա/

Լսեցին

ԱԲԵԼ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 29-36-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 25-Ն և 26-Ն որոշումների, հաշվի առնելով Աբել Մելիքսեթյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հունիսի 24-ի N Ք-2358), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Համաձայնություն տալ Աբել Մելիքսեթյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2011 թվականի դեկտեմբերի 06-ի N 2810750 վկայական) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Էդ. Պետրոսյան փողոցի թիվ 1/2/6 հասցեում գտնվող 75.0 քառակուսի մետր մակերեսով հասարակական կառուցապատման հողամասի փոխանակմանը Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի հուլիսի 18-ի N 18072022-07-0132 վկայական) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Է. Պետրոսյան փողոցի թիվ 14 հասցեում գտնվող 75.0 քառակուսի մետր մակերեսով հասարարակական կառուցապատման հողամասի հետ:
2. Աբել Մելիքսեթյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Աբել Մելիքսեթյանի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աբել Մելիքսեթյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 105-Ա/

Լսեցին

ՔՐԻՍՏԻՆԱ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 29-36-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 25-Ն և 26-Ն որոշումների, հաշվի առնելով Քրիստինա Աղաջանյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի մայիսի 12-ի N Ք-2069) Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Համաձայնություն տալ Քրիստինա Աղաջանյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2021 թվականի նոյեմբերի 02-ի N 02112021-07-0103 վկայական) Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի թիվ 45/6 հասցեում գտնվող 46,21 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի փոխանակմանը Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի ապրիլի 11-ի N 11042022-07-0070 վկայական) Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի թիվ 45/7 հասցեում գտնվող 46,2 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի հետ:
2. Քրիստինա Աղաջանյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Քրիստինա Աղաջանյանի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Քրիստինա Աղաջանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 106-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. 2022 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ավագանու անդամ Ա. Քոսակյանն առաջարկեց հավելվածում ընդգրկված համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի մեկնարկային գները բարձրացնել: Որոշումն ընդունվեց առաջարկված փոփոխություններով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 107-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՉԱՓԱԲԱԺԻՆԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ԾԱՏՈՒՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 58-րդ կետի և հիմք ընդունելով Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և գնումների բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2022 թվականի օգոստոսի 09-ի N Ք-9228)՝ Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1.«ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/32» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով Աբովյան համայնքի կարիքների համար բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման ծածկեր ձեռքբերելու գնման ընթացակարգի 1-ին չափաբաժինը՝ ասբեստյա թերթաքար, հայտարարել չկայացած:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 108-Ա/

Ավագանու անդամներ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՌԱՉՄԻԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՋԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՋԱՐՈՅԱՆ

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԷԴՎԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ

ԱՍՊՈՒՐԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ_____